

Ա. Գ. ԳՈԼՈԽՈՎ ՅԵՎ. Ն. Ա. ԵՑՇԼԻՄԱՆ

631.35  
4-63

ԽՆՁՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՆԵԵԼ  
ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈԱԿԱՆ  
ՄԵՐԵՆԱՆԵՐԻ ԶԱՐԴՎԵԼՆ  
ՅԵՎ. ՎՈՂԱԺՈՄ ՄԱՇՎԵԼՆ

22.05.2013

631.35  
4-63  
Մ. Ա. Խ. Հ. ՀՈՊԻՈՒՄԱՏ

04 AUG 2010

№ 63 (163) ԴՐՈՒՅԹՆ ՀԱՅՐԱՄԱԶՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 63 (163)

Ս. Գ. ԿՈԼՈՍՈՎ, ՅԵՎ, Ն. Ա. ԵՑԵԼԻՄԱՆ

ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Ե ԿՈՆԻԵԼ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄԵՐԵՆԱՆԵՐԻ ԶԱՐԴՎԵԼՆ  
ՅԵՎ, ՎԱՐԱԺՄԱՄ ՄԱՇՎԵԼՆ

1008  
34334



ՊԵՏՔԱՄԱՆ  
Ա. Մանուկյան  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԵՎՈՒ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Գյուղանտեսության վերակառուցումը մանր, բաժան-բաժան ան-  
հատականից խոչոր սոցիալիստականի՝ անխուսափելիորեն առաջ և  
բերում գյուղատնտեսական բարդ մեքենաների ու գործիքների գոր-  
ծածությունը։ Հասկանալի յեւ ուրեմն, վոր մեքենայացման նոր յեն-  
թարկված գյուղանտեսության մեջ նույնպես, ինչպես արդյունաբե-  
րության, «վերակառուցման շրջանում տեխնիկան և վճռում ամեն ինչ»  
(Ստալին)։ Այդ պատճառով՝ արակառը և արակառային գույքի ու-  
սումնասիրությունը առաջնակարգ տեղ և զրավում։ Մեքենային ցույց  
տրված անփույթ ու անչնորդ վերաբերմունքը ժամանակից առաջ մա-  
շում և այն, վորով պետք է լինում թանգ նորոգում կատարել և ջարդ-  
ված մասերը փոխել նորերով։ Հաճախ մեքենան բոլորովին անպետքա-  
նում և գործածությունից հանգում։ Կոլխոզների և ՄՏ Կայանների  
շահը պահանջում է զգուշ և աջալուրը վերաբերմունք գյուղատնտեսա-  
կան մեքենայի նկատմամբ՝ ինչպես աշխատանքի պրոցեսում, այնպես  
էլ նրա պահպանության ժամանակ։

Սովորությունների և ՄՏ Կայանների տեխնիկական վորակյալ պերսոնա-  
լը կոլտանտեսական լայն մասսաներին պետք և ծանոթացնի մեքանաներին  
և նրանց գործածության։

Կարծում ենք, վոր այս դրվույկը հնարավորություն կտա կոլխոզ-  
նիկն ու սովորողների բանվորներին գիտենալու, թե աշխատանքի ժա-  
մանակ ի՞նչպես պետք և վարվել գյուղատնտեսական մեքենայի հետ և  
ի՞նչպես պետք և կանխել մեքենայի ժամանակից առաջ ջարդվելն ու  
մաշվելը։

Մեքենաների վրա աշխատող յուրաքանչյուր վոք պետք և հիշի, վոր  
միայն կանոնավոր ու խելացի վերաբերմունք ցույց տալով մեքենային՝  
կարող և վերջինս (մեքենան) լավ աշխատել և աշխատանքի անհրաժեշտ  
արտադրական արդյունք տալ։

Ա. ԿՈՂՈՍՈՎ

Մ. ԵՅՃԱԿԻՄՅԱՆ

Նախ քան գութանը գործի զնելը, պետք ե լավ ծանոթանալ այս գործիքի կազմության, կառավարող բոլոր լծակներին և խնամելու գործին՝ աշխատեցնելու ժամանակ :

Գութանն աշխատանքի զնելուց առաջ պետք ե ստուգել, թե գութանի մասերը ճիշտ են դասավորված, փորձել լծակների գործելը, փորձել ավտոմատի աշխատելը, մասերը տեղին ամրացված լինելը, ամրացնել սուստակների գլխիկները, զննել շպինտները (մետաղյա ձողեր) և լավ յուղել գութանը :


Հատերը գութանը համարում են հասարակ գործիք և այդ պատճառով նրա խնամքին և յուղելուն քիչ ուշադրություն են դարձնում : Այսպիսի վերաբերմունքը միանգամայն սխալ է :

Աշխատանքի ժամանակ գութանի բանուկ մասերը ինիստ ծանր պայմաններում են գտնվում, վորովհետև գութանը պետք ե հսկվահարի հողի ուժեղ դիմադրությունը. յերբեմն այդ դիմադրությունն անակնկալ արգելվների (հարված, ցնցում) պատճառով այնքան և մեծանում, վոր գութանի բանուկ մասերն ավելի յեն ծանրաբեռնվում :

Առանձին ուշադրություն պետք ե դարձնել արակտորային գութանի անիվները յուղելու վրա: Այդ անիվներն ունեն յուղակայներ, վորոնք լինում են յերկու տեսակ՝ «Ձերկ» և «Ակեմայո»: Սրոկիչ գործիքի միջնորդ թանձր ճեթ են լցնում յուղակալների մեջ: Բացի այդ՝ միքանի տեսակի գութանների անիվներին հարմարեցված ե լինում պատճառակավոր փոս կափարիչ, վորի մեջ ճեթն են լցնում և, պատելով պառակը՝ լցանի մեջ յուղ են լցնում (նկ. 2):

Յուրաքանչյուր վաք պետք ե զիտենա, վոր փոշին ու կեղան ընկնելով յուղակալի մեջ՝ կեղաստամ են յուղանյութը, վորի պատճառով անիվների պնդանները (խցանը) արագ են աշխատում և ժամանակից առաջ մաշաւմ սոնիները: Այդ բանից խուսափելու համար պետք ե յուղակալը մաքրել, իսկ կափարիչներն որպական միքանի անգամ (3 անգամից վոք պակաս) աշխատանքի ժամանակ թավալ տալ (գլորել) և հետեւ, վոր յուղանյութը դորս ծորի անիվի կունդի (թոփի) հակառակ կողմից: Այսպիսով հնարավոր ե լինում ամբողջ կունդի յուղգիլը և, բացի գրանից, գուրս և զալիս կեղաստաված յուղը: Գութանների միջանի տեսակները հասարակ բաց կունդեր ունեն: Այդպիսի ողերը պահանջում են ծածկի ավելի մեծ անցքեր և այդ անցքերը՝ յուղով լցնել: Հաճախ կարող ե պատահել, վոր ողերի մեջ անցկացվելիք պատաստակները կորչեն և բացվածքները հողով լցվեն: Գործիքին ցույց արված այսպիսի անհոգ վերաբերմունքն անթույլատերելի յէ: Յեթե անտեսությունը պահեստի պառակներ չունի, ապա այդ պառակները կորչելու դեպքում ամբողջ անցքը պետք ե ծածկել վայտե լցաներով:


Յեթև գութանը յերկար ժամանակ են աշխատեցնում և սոնիների ո-  
ղերը մաշվում են, այդ գեղղում անմիջապես պետք է փոխարինել այդ  
սոնիները նորերով։ Ողը չառ գործածված գութանը չի կարողանում ու-



Նկ. 1. Կառավարության համակարգ կուտայի կառավարության համակարգ՝ սոնին առաջանակային գութանը


դիլ գծով ընթանալ, վորով և խախտում ե իր իսկ գործիքի ուղիղ աշ-  
խատում։ Բացի գրանից, անիվն սկսում ե ներզործել սոնու վրա և չու-  
տով մաշվում ե վերջինիս։ Սոնին փոխելն ավելի թանդ արժե, քան ողը։

Վոչ պակաս ուշադրություն պետք է գարձնել դիսկային դանակ-  
ների պտուտակները յուղելու վրա, վորովհետեւ ձնչման հետևանքով,  
դանակները չեն կարող ուղիղ ակոսներ կտրել։ Դիսկերի և անիվների  
գործածված պտուտակները յեթե չի կարելի նորողել, ապա անհրաժեշտ  
է նորերով փոխարինել։



Նկ. 2. Կառավարիչ, վոր փոխարինում ե յուղակալին (տարոնիца)։

Գութանի հիմնական բանուկ մասերի ճիշտ դրվածքը պակաս դեռ  
չի խաղում գութանի լավ աշխատելու գործում, վորով կանխվում է  
մաշվելը, վորով և ավելանում է գործիքի աշխատունակության տևո-  
ղոթյունը։



Նկ. 3. Հողհանիչի նիշտ դրվածքը (կողքից դիտված)։  
Նկ. 4. Հողհանիչի նիշտ դրվածքը (առաջից դիտված)։


Մեծ ուշադրություն պետք է գարձնել բների (կորպուսների) դր-  
վածքն, դանակների, հողհանիչների, դիսկային կտրիչների դրվածքն  
և նույնպես գութանը արակտորին շղթայելու վրա։

Դանակը դրվում է հորիզոնի հետամամբ մոտավորապես 75° ան-

կյան թեքությամբ, այնպես վոր դանակի ծայրը խոփի քթից առաջ և բարձր կանգնած պիտի լինի 25 մմ :

Հողհանիչն այնքան խորը պետք է դրված լինի, վոր կտրի բույսերի արմատները : Հողհանիչը յեթե խորը դրված լինի, այդ դեպքում նրան փաթաթվող կոշտ արմատները հնարավորություն չեն տա խրցել հողի մեջ (նկ. 3 և 4) :

Դիսկի կտրիչն այնպես պետք է դրված լինի, վոր նրա կենտրոնը խոփի ծայրի (քթի) դեմք լինի : Կտրիչի յեղանը պետք է ամրացված լինի հողի յերեսից բավականին բարձր, վորպեսզի չծածկվի անողետք խոռներով : Մաքուր ակոսներ ստացվելու համար անհրաժեշտ է, վոր դիսկային կտրիչը գութանի կորպուսից 1—3 սմ. ամելի բնդգրիկի, վորքան փափուկ լինի հողը, դիսկային կտրիչի ընդգրկումն այնքան ավելի լինի (նկ. 5 և 6) :



Նկ. 5. Դիսկային կտրիչի կենտրոնը պետք է լինի վոտքի դիմք (կողքից դիտված) :

Նկ. 6. Նույնն (առաջից դիտված) :


Գութանը տրակտորին անսխալ շղթայելն ամենակարեռն է : Գութանը հաճախ լավ չի աշխատում սխալ շղթայված լինելու պատճառով : Ճիշտ շղթայված լինելը գործնականում հասկացվում է գութանը բանեցնելու :

Գութանը տրակտորին շղթայելու պետք է ուշադրություն դարձնել շղթայման կետերի բարձրությունների փոխարարմարությանը, այն և՝ շղթայել գութանը արակտորի ողակին՝ առանց բարձրացնելու կամ գետնին սղմելու գութանի բները (կորպուսները) :

Գութանը տրակտորին ճիշտ կերպով շղթայելու ցույց և տրված նկար 7-ում : Սխալ շղթայելու պատճառով գործիքը վատ կաշխատի և բանեցնելու ժամանակ կծանրաբեռնվեն գործիքի գանգազան մասերը, վորի հետեւանքը կլինի գործիքի արագ մաշումը և հաճախակի այս կամ այն մասը կծարգվի :

Գութանը տրակտորին անսխալ շղթայելով՝ գութանի բանուկ մասերը կաշխատեն կանոնավոր պայմաններում : այն և՝ շրջանակը աշխատանքի ժամանակ հօրիդունական դիրքում և լինում, գութանն ունենում է սովորական ծանրաբեռնվածություն և՝ նրա յուրաքանչյուր կորպուսն առանձին՝ միատեսակ լայնության և խորության ակուներ և տալիս՝ մյուսներին հավասար : Միաժամանակ բարձրացնող մեխանիզմը հեշտ և աշխատում, իսկ այս հանդամանքը կհեշտացնի աշխատանքը

տրակտորիստի, վորը դառնալու և իջնելու տեղերում պէտք է արագ կերպով կորպուսը խրի և բարձրացնի հողից : Բայց դրանից, սխալ շղթայելու դեպքում ճնշումն անխիլի վրա միատեսակ չի լինում, վորով գութանի աշխատանքը լինում և անբավարար և հետեւանքը լինում է այն, վոր անխիլի պատռակներն արագ մաշվում են և հաճախ մաշվում են և անեւ սոնին :



Նկ. 7. Գութանը տրակտորին շղթայելու սխեմա :

Հեմա անցնենք գութանը բանեցնելու պակասավոր կողմերին, վոր գործնականում հաճախ են պատահում :

Գութանը դժվարությամբ է խրվում հողի մեջ : Այս հաճախ առաջանում է նրանից, վոր խոփի ըստ գութացած են լինում (բթացած) կամ չափից ավելի գործածված յերբեմն ել պատճառը կարող է լինել գութանը տրակտորին բավականին բարձրացնից կցված լինելը : Առաջին դեպքում պետք է սրել խոփերը, իսկ շատ գործածած լինելու դեպքում՝ փոխարինել նորերով, իսկ յերկրորդ դեպքում պետք է փոխել կցման գերքը ցածրացնելու հարակցման ողակը՝ պետք յեղած չափով : Գութանը հողի մեջ դժվար խրվելու պատճառներից մեկն ել կարող է լինել դիսկային դանակների սխալ դրվածքը, վորով բները գուրս են ձրգվում ակոսից :

Գութանը տրակտորի յանուից ծուռ և գնում : Կակուղ, խոնալ հող լինելու դեպքում գութանի դաշտային տախտակները սեղմվում են ակոսով պատի մեջ, վորով գութանի հենման կետը խախտվում՝ հակվում է մի կողմի վրա և գութանը ծուռ և գնում : Այս յերեւոյթը հեշտ և վերացնել զնելով մի տափակ մետաղյա ներքնող (ալման) կամ ինչվոր նման այլ բան գութանի կանգնակի (սոոյկա— գութանի թուր) և զաշտային տախտակի արանքում յեղած առաջին բուտի (յերկաթի պտուտակավոր ճող) տակ, դաշտային տախտակը փոխում է իր ուղղությունը և թեև սեղմում է ակոսի պատին, սակայն սովորում է, վոր գութանն ուղղի գնա : Գութանի ծուռ գնալը կարող է առաջանալ գութանը տրակտորին սխալ կցմելուց, վոր հեշտությամբ կարելի յեղած կուտակությունը վերն ասածներից :

Գութանը բաղկաւմ է հողը : Պատճառը կարող է լինել այն, վոր գանակը տրակտորին շատ ցածրից և կցված լինելում, կամ յետեւի անխիլի ցեխ է կալած լինում : Առաջին պատճառը կարելի յեղածնել փոխելով կցման բարձրությունը, իսկ յերկրորդ պատճառը՝ գերիշ դնելով, վորով աշխատելու ժամանակ ցեխը ամխիլից կորբվի :

Անհամաշափ ականներ ստացվում են տրակտորը վատ կառավարելուց, վորի հետեւանքը լինում է այն, վոր առջևի կորպուսն ընդդր-

կոմ և ակոսը մեկ լայն, մեկ՝ նեղ : Այս առաջանում ե յերբեմն այն բանից, վոր գութանի ըրջանակը փոքր ինչ ծոված ե լինում, կամ բունը (կորպուսը—շուռ յեկած, վորով նրանք (կորպուսը և ըրջանակը) ծուռ դիրք են ստանում . այսպիսի դեպքերում պետք ե ուղղել և հավասարել ըրջանակն ու բունը :

Գութանի ավտոմատն անկանոն է զործում : Ավտոմատի անկանոն աշխատելը կարող է առաջացած լինել նրանից, վոր գաշտացին անիվի (սակառվան գութաններ) սոնին ծովել է, կամ՝ յերկար ժամանակ դործածության մեջ լինելով՝ մաշվել է, կամ ծովել են ինքնարարձրիչի չնիկները (սաճակա սամոդեմնիկա), կամ գութանի բունը, (խոփերը) հողի մեջ խրված դեպքում, քաշելը բավականին յերկար է տեղում : Առաջին դեպքում՝ պետք ե ուղղել առամնավոր ձողը (զնբացար բերքա), յերկորդ դեպքում՝ պետք ե զննել ինքնարարձրիչ և ուղղել չնիկները, վերջապես յերրորդ դեպքում՝ գութանը հողում խըրդը լուսամար բավական կլինի կարձ ընդհատումը :



Նկ. 8 Տրակտորային վար :


Գութանի պահպանումը : Հենց վոր գաշտային աշխատանքները վերջանան, պետք ե մաքրել գութանի վրայի կեղտը, և գութանը նավթով սրբել ու յուղել : Առանձին ուշադրություն պետք ե դարձնել գութանի բանուկ մասերի վրա, այն ե գլորվող մասերին (ՕՏՎԱԼ) և թանի բանուկ մասերի վրա, այն ե գլորվող մասերին (ՕՏՎԱԼ) և թանի բանուկ մասերը պետք ե լավ յուղել ճարագով կամ թանձր ճեխուիքին : Այդ մասերը պետք ե լավ յուղել ճարագով կամ թանձր ճեխուիքին յուղելու համար . հակածով, վոր գործածքում ե գութանի անիվները յուղելու համար . հակածով, վոր գործածքում ե գութանը կարող ե փչացնել խոփի և գլորվող մասերի վողորկությունը :

Չմեռ ժամանակ, գութանը պահպանելիս, պետք ե թուլացնել բոլոր պտուտակները . հակառակ գեպքում պտուտակները կձգվեն, կլայնանան և աշխատանքի ժամանակ բանի պետք չեն դալ :

Կամ զանազան կառուցվածքի շարքացաններ, վորոնք հարմարեցված են հացահատիկի և այլ կուլտուրաների ցանքի համար, ինչպես նաև հանքարյին պարարտացման համար և այլն : Այստեղ կխոննիք հացահատիկի ցանող շարքացանի մասին, վոր մեղնում ամենից շատ տարածված է : Զինովիեվի քաղաքում Պետրովսկու անվան և «Կարմիր սասող» խորհրդարյին գործարաններում պատրաստում են 19 շարքանց խոփիկագոր և 24 շարքանց զինկավոր շարքացաններ : Առաջինը (19 շարք) ձիաքարչ է, ուստի յեթե գործածվի տրակտորի հետ, պետք է տրակտորին կցել, միաժամանակ մի քանի այդպիսի շարքացաններ (2, 3 և 5), նայած տրակտորի ուժին : Այս տիպի շարքացանը, վոր հարմարեցված է ձիով քաշելու համար, տրակտորի հետ գործածելիս ունենում է ել ազելի արագություն, վոր անպայման բացասար է աղղում շարքացանի դիմացկանության տեղողականության վրա, ուստի՝ այսպիսի շարքացաններն աշխատեցնելիս, խնամելիս և պահպանելիս պահպանչվում է ուժեղ հսկողություն :

Շարքացանի խնամքը և աշխատանիքի նախագատրաստությունը : Ինչպես ամեն տեսակի մեքենա, աշլուեն ել շարքացանը՝ աշխատանիքն ակտիվիս, պետք ե մանրամասն զննել, մեխանիզմի նկատմած թերությունները վերացնել և լավ յուղել պատվող մասերը :

Շարքացանը սարքի գցելիս՝ առանձին ուշադրություն պետք է դարձնել յանող ապարատին, վորը պետք ե ստուգել և վորչել, թե ինչ տեսակի սերմ յանելու համար ե հատկացված՝ համաձայն գործարանի կողմից յուրաքանչյուր շարքացանին կցված ուղեցույց-գրքույիկի :



Նկ. 9. 19 շարքանց խոփիկավոր շարքացանի ընդհանուր տեսք :

Շարքացանը զննելիս, մեծ ուշադրություն պետք ե դարձնել բարձրացնող մեխանիզմի զրության վրա : Շարքացանը կանոնավոր աշխատեցնելիս մեխանիզմը հետությամբ և ձկունությամբ պետք ն բարձրացնի և իջեցնի խոփիկները :

24 Նարքանց շարքացանի ավտոմատին, այս և՝ խոփիկները բարձրացնող և իջեցնող մասերին պետք է լավ ծանոթանալ շարքացանի աշխատելու ժամանակ միայն։ Ավտոմատը բանի գցելու համար կա առանձին լծակ, վոր հարմարեցված և ըլջանակի վրա՝ սերմարկղի առաջ։ Յեթե այս լծակը իւտ ու առաջ շարժենք, այդպիսով իրենք իրենց կրչեն կամ կրաքարանան խոփիկները։ Լծակի վրա կա հենարան վորի տեղափակումով կարող ե ստաջանալ խոփիկների հինգ զանազան դրություն՝ ըստ ընթացքի խորության։ Հենարանն առաջ տանելով հասովածի փոխարքի պատճի վրա, կարելի յէ ոգտվել այս լծակից, խոփիկները ձեռքով բարձրացնելու կամ իջեցնելու համար, այնպես, ինչու 19 շարքանց շարքացանների լծակից ենք ոգտվում։

24 շարքանց դիսկավոր շարքացանների շրջանակի\* հենարանի տակ դրված և շպրենդել (յերկաթյա ըլջանաձև ձող), վոր ամրացն ըլջանակին տալիս և անհրաժեշտ դիմացկունաթյուն (կոշտություն)։ Եսր շարքացանը գործի դցելուց առաջ պետք է պրկել (ամրացնել, ծ. թարգ.) ապրենգելը, պրկելով պատուակների գլուխները, հակառակ դեպքում քիչ պրկած ապրենգելը պատճառ կղառնա, վոր չըջանակի ցածրանա և արկու ծովի։


Կարեւոր ենակ սառուցել սրմ անցկացնող խողովակները ցանող ամրացները մասնակի հարակել։ Յեթե լավ ամրացրված չեն հարակումը, այդ դեպքում պետք է հանել խողովակը և թիթե հարգածի միջոցով սեղմել սերմատար խողովակի ձագարը։ Հակառակ գեպրում սերմատար խողովակը թույլ միացված լինելու պատճառով աշխատանքի ժամանակ կարող ե գուրը ընկնել և սերմն իզուր կորցնել։

Աշխատանքի սկզբում քանառչորս շարքանց շարքաց անների դիսկավոր խոփիկները պետք ե կարգի բերել և ստուգել մոքրիչների կանոնավոր դրված լինելը։ Յեթե պարզվի, վոր բույր մաքրիչները կանոնավոր տեղավորված են (մաքրիչները պետք ե կամած լինեն զիսկերին, այնպես, վոր վերջիններս կարողանան աղատ դարնալ), բայց դիսկերը շափականց արագ են զանում, վոր հնարավոր չի լինում ձեռքով թույլացնել, այդ դեպքում անհրաժեշտ ե կանոնավորել զիսկային առաջքակալները (ՊՈՃԱՊԻՆԿԻ)։

Դաշտ դուրս գալուց առաջ պետք է յուղել անիվների և դիսկերի ոռնիները, գլանների առանցքակալները և յուղավ լցնել այն բոլոր բացվածքները (ՕՏՎԵՐՏԻԵ), վոր անհրաժեշտ և յուղել։ Մեքենան պետք ե կանոնավոր յուղել, չթողնելով, վոր յուղանյութը հոսի՝ մանալինդ շանող գործիքի վրա։ Յեթե ինչ-ինչ պատճառով, յուղը թափվել է շանող գործիքի մէջ, այդ դեպքում չոր շորով պետք ե սրբի գործիքը։ Հակառակ դեպքում հատիկները կկպչեն ճռիստարակին և կիսանդարդի շանելու պացեսը։

Յերբեք չպետք է յուղել անիվի ատամները։ Անիվի ատամները չոր և մաքուր պետք ե պահել՝ այն պատճառով, վոր փոշին կոշելով անիվի ատամներին, նպաստում ե շուտ մաշվելուն։

\* Գութանի և շարքացանի շրջանակները քառակուսի ձեւ ունեն։  
12



Նկ. 10 Գրուզների ցանող գործիքը.

Յուղելուց հետո, շատ ոգտակար կլինի շարքացանի ամրող մեխանիզմի անիվները պատճեննել, վորով հավասարաշատի կյուղվեն բոլոր բանուկ մասերը։

Բանեցնելիս նույնպես կարիք կա ավելացնել յուղանոթի յուղը, վորովհետև ձիւտ ժամանակին յուղելուց և կախված շարքացանի դյուռ բաշարժությունը և աշխատանքի հարատեսությունը։

Կանոնավոր կերպով պետք է յուղել հետեւայլ մասերը։ Թահաճր յուղով (տավոտ)՝ բնթացող անիվների քարշիչները և ավտոմատների տափակակ ներքնաղները (Պայնա)՝ յուղել՝ աշխատանքի չորս ժամը մեկ անգամ։


Զրալի ձերով՝ Սերմարկղի անկյունավոր կողքերի վրայի ցանող պրանիկի քարշիչները, առասմանավոր անիվի ձողիկները, սեղերը, տափակ ողը և քառակուսի ձեր անջատող վլանիկը, նույնպես և գիսկային խոփիկները՝ յուղել՝ աշխատանքի ութը ժամ մեկ անգամ։

Խոփիկները բարձրացնող լծակի սեղմող մասը (զապենկա) և ավտոմատի շարժուն ձողիկի գլուխկը՝ յուղել՝ աշխատանքի չորս ժամը մեկ անգամ։

Մնացած մասերը յուղել պետք յեղած դեպքում՝ որական ժեկ անգամից վուշ ավելի։

Աշխատանքի դաշտում։ Նայած շարքացանի տիպին և տրակտորի ուժին՝ շարքացանը տրակտորին հարակցելու զանազան միջոցներ են կիրառվում։

Ամենից ավելի տարածված և շարքացանների զույգ հարակցումը, որինակ՝ «Ֆորդոն» և «Բնակերնացիոնալ» տրակտորներին կարելի յէ հարակցել 19 շարքանի յերեք շարքացան (նկ. 11), իսկ նույն տեսակի պակելի ուժեղ տրակտորներին՝ 4 կամ 5 շարքացան\*։




Նկ. 11. 19 շարքանց յերեք շարքացանների հարակցումը (միացումը)։

Ներկայում շատ կազմակերպություններ տրակտորը շարքացանին կցելու մի շարք են մշակել։

\* 1930 թվին Պետրովկու անվան զերծարանի բաց թողած 19 շարքանի շարքացանների կառուցվածքը փոփեց և բավականին ծանրացավ, 1930 թ. աշնան փորձերը ցույց են տալիս, վոր շարքացանների բարշման ընդդիմաղբությունը 170 կտ.-ից անել և մինչև 250 կտ.-ի։ Այդ պատճառով, որինակ, բնակերնացիոնալ տրակտորին հարակցում 19 շարքանի միայն 2 շարքացան։

Շարքացանը տրակտորին կցելիս՝ բացի շարքացանների քանակից, պետք է ուշադրություն դարձնել չղթայման կետերի բարձրության վրա։ Կան շատ տրակտորներ, վորոնց չղթայման կետը շատ ցածր է ինուռմ՝ քան շարքացանի չղթայման կետը, նման գեղգում պետք է հետևել, վոր աշխատած ժամանակ շարքացանը ցած թեքված կամ շատ բարձրացած չլինի։ Շարքացանը սիսալ դիրքի մեջ յեղած դեպքում յետեւի և առջևի մի շարք խոփիկներում խցկված հատիկները դանաղան խորության կընկնեն։ Կցման անհամապատասխան լինելը հեշտությամբ կարելի յեւ վերացնել, յեթե շարքացանի կարճ թափայտի ծայրին ուղղաձիր դիրքով ամրացնենող ցածրացնող դործիքը (վերին ծայրին անցքեր ունեցող՝ կորացրած բարակ, նեղ տախտակ), վորի միջոցով կատարվում է կցումը (նկ. 12)։ Շարքացանը կամ շարքացանները տրակտորին ճիշտ կցված լինելու դեպքում սերմարկղի վերին թևերը, կտփարիչը բացվելիս պետք է լինեն հորիզոնական։



Նկ. 12. 19 շարքանի շարքացանը կցելու համար ցածրացնող դործիք։

Շարքացաններն աշխատանքի վայրը փոխադրելիս թոկով կամ շրթայով իրար են կասկում՝ մեկը մյուսի յետերից, վորովհետեւ 3-5 շարքացան կողք-կողքի փոխադրելն անհարմար է։ Շարքացանները պետք է հարակցել ուղղակի շրջանակից և վոչ թե խողովակից, վորի մոտ կտփած են խոփիկները։ Այդուհեւ պետք է վարվել, վորովհետեւ խողովակը կարող է ընկնել, վորով և կիսանդրպի սերմի հավասարաչափ հոսելը։

Շարքացաններն աշխատանքի վայրը փոխադրելիս սերմարկղը սեղմական է լցնել, վորովհետեւ սերմով ծանրաբեռնված լինելը մի կողմէց կավելացնի մեքենայի ծանրաբեռնվածությունը և անհարթ ճանապարհուով փոխադրելիս կարող է վատ անդրադառնալ սոնիների և մեքենայի մեխանիզմի վրա, մյուս կողմից՝ հացահատիկները շուրջ ցնցվելուց խսանում են խցկվելով յելքի անցքերում, վորի հետեանքը լինում է անհավասարաչափ ցանքը։

Շարքացանն աշխատեցնելիս՝ չպետք է ծանրաբեռնել պահեստի ցորենի պարկերով, վորովհետեւ պարկերի ծանրության ճնշումով խողովակները կարող են ծովել և բարձրացնուող մեխանիզմն ել անկանոն կաշատիքի։

Հացահատիկով լիքը պարկերը նախորոք պետք է թողնել դաշտում, համապատասխան տեղերում, և այդ պարկերից պետք է յեղած չափով լրացնել սերմարկղի սերմը։

Կարևոր են նաև ուշադրություն դարձնել սերմատար խողովակներին, վորոնք հաճախ լցվում են կեղտով, վորով հացահատիկների գուրս թափկելը խանգարվում է։ Այս պատճառով հացահատիկների անկանոն դուրս թափկելը հասկացվում է այն ժամանակ միայն, յերբ հատիկը գուրս չի գալիս և նկատվում են հողի չցանված չերտարեր։ Այդպիսի չցանված չերտերը կրկին անդամ ցանելը աշխատանքի խոչը վատնում կպահանջի։

Ցանված ակոսի ծայրում՝ դառնալիս խոփիկները պետք է բարձրացնել զետնից և, դառնալուց հետո, կրկին իջեցնել։ Յեթի լծակը բարձրացնելիս զդացվի ինչ վոր արգելք, վոչ մի դեպքում ուժեղ ճրնչում չպետք է դործ դնել (լծակի վրա), այլ պետք է թողնել, վոր շարքացանը մի քիչ առաջանա, ապա կրկին փորձել լծակը բարձրացնել։ Լծակը բարձրացնելուն, արգելք կարող է լինել այն, վոր անջատիչի ատամնավոր անիմներն անջատման համար անհարմար դիրք ննջումնել։

Խոփիկները հողը զցելիս, լծակը չպետք է ուժեղ կերպով բաց թողնել, — կարող է ջարդվել։ Յեթե շարքացանը միջնակներից (արտերի սահման) անցկացնելն անհարմար է, այդ դեպքում, շարքացանի բռնած տարածության չափ միջնակից հեռու, պետք է բարձրացնել խոփիկները, թողնելով չցանված հողի այդ չերտը։ Աշխատանքը վերջացնելուց հետ պետք է ցանել այդ չերտն առանձին (շարքացանը մեկ անդամ տանելով այդ չերտի վրա)։ Շարքացանն աշխատեցնելիս խոփիկները բարձրացնելուն, մաքրելուն և ցանելուն հոկելու համար առանձին բանց է պետք։

Դաշտ պետք է տանել պահեստի փայտու ցցիկներ՝ հարդվածները փոխադրելու համար։ Այդ ցցիկները բարի և այլ արտերի հանդիպելու դեպքում ջարդվելով կանխում են ավելի թանգարժեք մասերի փչանալն ու ջարդվելու։ Ուստի վոչ մի դեպքում չի կարելելի փայտու ցցիկների փոխարեն զնել ավելի դիմացկում հենարաններ, ինչպիսին են յերկաթալարը, մեխը, զգլինարը (մետաղյա ձողիկ) և այլն։ Յանքը վերջացնելուց հետո, անմիջապես մանգաղնին կերպով պետք է մաքրել շարքացանի փոշին ու կեղուը։ Սերմարկղում մնացած սերմը պետք է դատարկել։ Սերմարկղում մնացած սերմը հետությամբ կարող է ծլել, վորի հետեանքը կրկին արկղի փայտու մասերի փառումը, իսկ մետաղյա մասերն ել կժանգոտվեն և շարքացանը կանպետքանա։

Շարքացանի այն մասերը, վորոնց ներկը թափվել է, պետք է նոռեցն ներկել, վորովհետև ներկը պահպանում և տախտակը և յերկաթթողի և խոնավության աղղեցությունից։ Զներկված մասերը պետք են յուղել։

Չմեռը շարքացանը պահպանելիս, պետք է ուշաղբություն դարձնել սերմատար խողովակների վրա, առանձնապես ուշինք մասերի վրա։ Ուղինե սերմատարները պետք է չոր ագաղ լցնել, հակառակ գեղքում ցրտի աղղեցությունից կուչ կզան, կչորանան, և այդպիսով սերմատարները կանգետքանան հետագա աշխատանքի համար։

Շարքացանը պետք է պահել չոր և ծածկ ունեցող շենքում, վորովհետև և անձրնը կփաշցնեն և կքայքայեն մեքենան։

### ԲԵՐՔԱՀԱՎԱՔԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

Բերքահավաքի մեքենաները կարելի յե բաժանել 5 կատեգորիայի։  
1. Խոսհար մեքենա (ԿՈՍԻԼԿԻ) — խոտքաղի համար։

Հնձող մեքենա (լոբօրգրեյկա) և հնձող ինքնանետ մեքենա (շատկա սամօբրօսկա) — հնձում և հասկը՝ առանց խուրճ կապելու։ Սրանցից առաջնի համար պետք է միաշխատավոր ավելի, վորպեսզի մեքենայի հարթակի (պլատֆորմա) վրայից դեն դցի հնձված հասկերը, իսկ յերկրորդը՝ հնձող ինքնանետ մեքենան այդ աշխատանքը (դեն դցելը) կատարում է վորցիսավոր ապարատի միջոցով, վորը դեն և շաղատում հնձված հասկերը հավասարաչափ կեղերով։ Փոցիսավոր ապարատը կանոնավոր գործածելով, կարելի յե հասնել այն աստիճանին, վոր խիտ բուսած արտում այդ ապարատն ավելի հաճախ դուրս կնետի, այն ե՝ վորցիսավոր ապարատը մի անդամ շրջան անելիս՝ մեկ անդամ, իսկ նուր բուսած արտում 3 անդամ շրջան անելիս վրա չորրորդին կամ 4 անդամ շրջան անելիս՝ վրա հինգերորդին մեկ անդամ դուրս կնետի։

3. Խրակաղ մեքենաներ (ՇՈՊՎԱՅԱԼԿԻ), վորոնք բացի հընձող ապարատից, ունեն նաև խուրճ կապելու հարմարություն, վորով հնձված հասկերից խուրճ և կապիլում։


4. Վինդրուուր, վոր նույն խոտքար մեքենային են նման։

Այս մեքենան գործ է ածվում գլխավորապես բերքահավաքի (հացատիկի) համար և վորով հնձվածը գարավում և անընդհատ պտտավող գլանի վրա։ Վինդրուուրն սկսում է մուտք գործել մեր գյուղատընտեսության մեջ և հետագայում անկասկած կրոնի կարելոր տեղ բերքահավաքի մեքենաների շարքում՝ մեր կոլլազներում, սովորաբար և ԱՏ կայաններում։

5. Կոմքայն, վոր հավաքելով բերքը, անմիջապես կալուում է։

Կոմքայնը արտաքուստ բաղկացած է յերկու հիմնական մասից՝ իեղերից, այն ե՝ հնձող ապարատն իր պլատֆորմով ու ելեվատորով և յերկրորդ՝ Բարդ կարտիչց, վոր շարժման մեջ և դրվում առանձին ժոտորի միջոցով։ Այդ ժոտորը հարմարեցված է կոմքայնի վրա՝ առջևի կողմում։ Կարսված ու զաված հատիկները բունկերից (հատիկները հավաքող մաս) ընկնում են պարկի մեջ կամ թափվում են կողքից գնացող սայլի կամ ավտոմոբիլի մեջ։

Դարմանը մնում է արտում դեղ-դեղ կամ ցրված։ Տարեց տարեկոմքայն ավելի և ավելի յե տարածվում մեր խոշոր սոցիալիստական տնտեսություններում։ ԽՍՀՄ-ի հարավային մասում և Սիբիրում կառուցվում են մի շարք գործարաններ, վորոնք և հնդամյակի վերջին, բաց պիտի թողնեն յուրաքանչյուր տարի տասնյակ հազարավոր կոմքայններ։




Նկ. 13. «Խոլտ» կամբայնն աշխատելիս։

Վերևում ցույց տրված բերքահավաք մեքենաներից կանդ կառնենք այն տիպի մեքենաների վրա, վորոնք ամենից շատ են տարածված ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության մեջ։

### ԽՈՑՀԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

Բոլոր տեսակի բերքահավաք մեքենաներն ունեն դանակավոր ապարատ, վոր իր կառուցվածքով, ինչպես և աշխատելու ձեռք, հիշեցնում և գլուխ խուրճելու մեքենան։




Նկ. 14. Դանակավոր ապարատ։



Դանակից, մատներից, մատավոր չորսուից (քառանկյունի տաշած գերան), սեղմիչ պլաստինկաներից, չուափող պլաստինկաներից և ծուռ-սեպաձեւ շարժուն - ձողավոր մեխանիզմից:

Դանակը պատրաստում են պողպատից և ունի յերկար ձողի (դոլայի): Ճերկու դամերի միջոցով դանակին միացված են սուր պլաստինկաներ՝ այսպես կոչված դանակային հատվածներ: Դանակավոր չերաբ շարժվում է առանձին ուղղություն ունեցող մատների մեջ: Այդ մասները շինաված են տափակացրած չուպունից (նկ. 15):




Նկ. 15. Մատը պլաստինկայի հետ:

Մատի կտրվածքներում ամրացված ե սուր ատամնավոր յեղբերով առանձին պլաստինկա, վորը յերկրորդական դեր ե խաղում աշխատանառով ():

Քի ժամանակ (կտրիչի անշարժ մասը նկ. 15-ում նշանակված և «ք»

Դանակավոր չերան այնքան բարակ է, վոր աշխատանքի ժամանակ հեշտությամբ կարող է ճպիել և զատկել մատներից՝ դանակի բերանի արանքներում բացվածք առաջացնելով: Այդ բացվածքը խանդարում է կտրիչ ապարատի աշխատանքը. Հասկը կամ խոտը չեն կարվում, ներս են քշվում և տրորվում են մատների և հատվածների արանքում: Վորպեսզի խուսափենք դրանից, մատավոր չորսուի վրա 30-ական սմ. հեռավորության ամրացված են հատուկ սեղմիչներ (նկ. 16):



Նկ. 16. Սեղմիչներ:

Սեղմիչներն այնպես են հարմարեցված, վոր հնարավորություն են տալիս դանակին՝ աղատ շարժվել յետ ու առաջ, բայց առանց թույլ տալու, վոր դանակը բարձրանա: Վորաբեսի դանակը յետ չծալիի, չորսուին ամրացված են չփման պլաստինկաներ, վորոնք ուղղություն են առվագ շեղին և տրորվելուց պաշտպանում են այն:

Դանակը շարժման մեջ ե դրվում ծուռ-սեպաձեւ շարժուն-ձողավոր մեխանիզմի անիշների միջոցով: Այդ մեխանիզմը բաղկանում է ծուռ-սեպաձեւ մատնավոր դիսկից և շարժուն ձողիից (նկ. 17):

Նոր խոտհար մեքենայի բոլոր մասերը, միացնելուց առաջ՝ պետք ե մաքրել նրանց վրայի կոչտացած ներկն ու կեղտը և լվանալ նավթով: Մեքենայի բոլոր մասերը պետք ե գասավորել հարթ, մաքուր, գետնի վրա, ծածկի տակ, այն կարգով, ինչ կարգով այդ մասերը զետեղվելու - ամրացվելու յեն մեքենայի վրա: Մասերի հավաքումը յերբեք չափանիկ է կատարել բացողյա վայրում, մանավանդ խոտի վրա, վորով հետեւ այդպիսի տեղում հեշտությամբ կարող է կորչել այս կամ այն մասը: Մեքենայի մասերը դասավորելիս և տեղավորելիս պետք է առաջնորդվել գրահանդու:

Զպետք ե շատ ուժեղ պրկել պատուակների գլխիկները, վորպեսզի տամնավոր շեղբը չփչանա. բայց և չի յել կարելի թույլ թողնել, վորովհետև այդ գեղվորում աշխատանքի ժամանակ պատուակի գլխիկները հեշտությամբ կրանդեն և կորչեն:



Նկ. 17. Ծուռ-սեպաձեւ շարժուն-ձողավոր մեխանիզմ:

Զպետք ե յերբեք մեքենայի այս կամ այն մասը սղոցել, մանավանդ կարձացնել, կամ կորացնել: Յեթե չի համարվում վորե և մասը, նշանակում ե՝ մեքենայի մասերը սխալ են դասավորված: Մեքենայի մասերը ձիչու դասավորված և տեղավորված կլիմեն, յեթե տրված լինեն իրենց տեղում՝ առանց յետ ու առաջ քշվելու:

Յերբ մեքենայի մասերը հավաքված և հարված են իրենց տեղերը, պետք ե փորձել դանակի, լծակների և վոտների (Պեդալ) աշխատանքը: Ծուռ մատերը պետք ե ուղղել անմիջապես. Նոր մեքենայի մատերը քիչ անդամ են ծովում, բայց այն մեքենաներում, վորոնք բավական ժամանակ գործածության մեջ են յեղել կամ մի քանի անդամ նորոգման յենթարկել, մատերը հաճախ են ծովում:

Նախքան վորեն ուղղում կամ ուեմոնտ անելուն ձեռնարկելը, պետք է ճշորի պարզել մեքենայի վատ աշխատելու պատճառը:

Մեքենայի պատվազ և շարժվող բոյքը մասերը պատճառ աշխատանքն սկսելու անհետուց առաջ մեկ ել՝ հաջին:

Ամենից ավելի և հաճախ պետք ե յուղել շարժուն ձողիկի (տացն) գլխիկը, վորովհետեւ վերջինս շատ արագ և պտուիում՝ մեկ դեպի աջ և մեկ դեպի ձախ և պտույտի յուրաքանչյուրը փոփոխումից ստանում ե ուժեղ հարված, վորի հետեւանքով ցայտելով դուրս ե թափվում քըսաված յուղանյութը, իսկ յեթե քիչ ե յուղված, այդ դեպքում մետաղը տաքանում է: Առանցքակալները, ընթացող անիմերը, ատամնավոր փոխարիչ անիմի գլխանիկները յուղելուն բավականաշափ ուշադրություն պետք ե դարձնել: Առանձին ուշադրություն պետք է դարձնել: Առանձին ուշադրություն պետք է յուղել առանցքակալները, վորոնց վրա հենված ե (նստած) ծուռ-սեպաձեւ մեխանիզմը:

Յուղվելու յենթարկա բոլոր անցքերը յերկաթալարով պետք ե մաքրել, վորպեսզի յուղն աղատ ծորա նրանց միջով: Ժամանակ առ ժամանակ պետք ե մաքրել յուղակալներում յեղած փոշին ու կեղտը: Յուղվե-

Մք բացվածքները (լիճքերը) պետք է ծածկված լինի կավարիչներով։ Յեթե կորել են կափարիչները և ուրիշն ել չի ճարվում, այդ դեպքում բացվածքները պետք է խցիկել փայտե խցաններով։ Հակառակ դեպքում բացվածքների մեջ փոշի և ավաղ կցվի, վորով կմաշվեն մեքենայի մասերը։

Վոչ մի դեպքում չի թույլատրվում ատամնավոր անիվի ատամները յուղել, վորովհետև փոշին ու ավաղը հետությամբ կլազեն ատամներին և դրանով ել ատամնավոր անիվը չուտ կցացվի։

Նոր մեքենան գործի ցցելուց առաջ պետք է վորձել այն՝ 10-15 րոպե զատարկ աշխատեցնելով։ Այդ վորձի ժամանակ, յեթե չնկատվի վորեւ թերություն, ուրեմն կարելի յե գործի ցցել մեքենան։ Աշխատանքի ժամանակ շատ կարեսր և ստուգել, թե պառուտակների դիմիկ-ները և շպիտները լավ ամրացված են, թե՞ վոչ։ Քիչ չի պատահում, յերբ պառուտակի ոլուխը դուրս է պրծնում, վորի հետեւանքը լինում և առանձին մասերի փչացում, և յերեմն ել ամբողջ մեքենան և չարդվում։ Որինակի համար՝ յեթե թուլանում է մասն ամրացնող պառուտակի գլխիկը, այդ դեպքում մատը դուրս կալիճնի և նրա հետեւ վից հատվածը (սեղմենտ) յետ կդնա, կամ մատը կջարդվի, բայց ավելի վասն ել և պատահում՝ ջարդ ու փշուր և լինում շարժուն ձողիկը կամ դանակավոր շերտը։ Դւստի պետք և որական յերկու անդամից վոչ պակաս բանալիով ստուգել բոլոր պառուտակների գլխիկները և թուլացածներն ամրացնել։

Եերքահավաք մեքենաների դանակները պետք է սրել աշխատանքի յուրաքանչյուր 5-7 ժամը մեկ անդամ, բայց պետք է չափավոր սրել, վորպեսզի շուտ չմաշվեն։ Դանակները սրելու համար հատուկ հեսանաքը և գործածվում։

Դանակային հատվածների սրելը պետք է կատարել շատ կանոնավոր, աշխատելով, վոր ինչքան հնարավոր և՝ սրելու սկզբանական անկյունն անփոփոխ մնա։

### ՀՆՉՈՂ ՄԵՔԵՆԱԿՆԵՐ (լօբօրեյք)


Այս մեքենայի (լօբօրեյք) հնձող մասին ամրացված է հարթակ (պլատֆորմա), դրված առանձին ըրջանակի վրա։ Այդ հարթակի վրա յե ընկնում հնձված հասկը։ Վորպեսզի հասկը հարթակի վրա ուղղ ընկնի, այն ե, գլուխները դեպի յետ, հնձիչի վերի մասում հարմարելած և վիլակ (МОТОВИЛО), վոր չորս-տախտականի միթե։ Վիլակը շարժման մեջ դրվում ընթացող անիվին միացված կաշվե փոկի (բեմեն) ողնությամբ։ Վորպեսզի մեքենան կանոնավոր աշխատի, պետք և վոր վիլակի գլանիկը դուզահեռ լինի մատավոր չորսուին և բացի այդ, համապատասխան լինի հացարույսի բարձրության—ցածր լինելու դեպքում, գլանիկը պետք է ցածրացնել, իսկ յեթե լավ են բարձրացած, գլանիկը պետք է բարձրացնել, յեթե հացարույսը խիս ե աճել, գլանիկը պետք է առաջ տանել, յեթե նոսր և՝ յետ տանել։

Այս մեքենայի վրա աշխատող յուրաքանչյուր անձ պետք է լավ յուրացնի այս հասարակ կանոնները։ Այս կանոնները նկատի չառնելուց հաճախ մնապում է մեքենան և նույնիկ վիլակը ջարդվում է։ Այս սիստեմի մեքենան\*) պատկանում է հնացած մեքենաների շարքին՝ այն

\*). «Լօբօրեյք» հայաստանում չի գործածվել և չի դրածածվում։ (Ծ. թ.)

պատճառով, վոր հնձված հասկը ձեռքով դեն գցելը շատ է դժվարացնում աշխատանքը։ Բացի դրանից՝ հասկերը ցրված վիճակում են թափվում և հավաքելիս բավականաշափ հատիկներ իրուր կորչում են։ Սրտասահմանում այս մեքենային փոխարինում և ինքնանետ մեքենան (սամօբրեկա) նկ. 18), վորը վոչ միայն հնձում է հասկերը, այլև դեն է չպատճառ կարելի չպատճառ հարթակի վրա դիղված խրձերը։ Ինքնանետ մեքենան կարելի յե աշխատեցնել մեկ աշխատավորով, իսկ հնձող մեքենայի (լօբօրեյքա) համար յերկու աշխատող է պետք։

**Շաղ (ցող)** և խոնավ ժամանակ փոխարիչը պետք է ծածկված լինի



Նկ. 18. Ինքնանետ մեքենայի ընդհանուր տեսքը։

Խոտհար և հնձող մեքենաները (վերը նկարագրված) հարմարեցված են ձիով քաշելու համար։ Տրակտորի հետ գործածելիս՝ նրա (տրակտորի) քաշող ույժը լրիվ ոգտագործելու համար կարելի յե տրակտորին կցել 2-3 մեքենա և ավելի՝ նայած տրակտորի ուժին, արտի դիրքին ու խոռոշությանը։



Նկ. 19. Թերքախաղ՝ հնձող մեքենաներով։

ԱՐՁԿԱՊ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ԲԵՐՔԱԿԱԼԱՔԻ մԵՔԵՆԱՆԵՐԻ շարքում՝ աԼԵԼԻ բարդը և մԻԱԺԱՌԱՆԱԿԻ  
ԽՍՀՄ-ում ամենից շաս տարածվածը խրձկապ մԵՔԵՆԱՆ է (նկ. 20) :




